



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«02» 05 2018թ.

No 06/3-1/22045-18

Ձեր No _____

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՅԻԱ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Ռ. ՄԱՇԱԴՅԱՆԻՆ

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՄԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 09.04.2018թ.

թիվ Պ-21 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը՝ իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի 266-րդ հոդվածին համապատասխան՝ ընտանեկան ծեռնարկատիրություն է համարվում ծեռնարկատիրական եկամուտ ստանալու նպատակով ընտանիքի մեկից ավելի անդամների կողմից համատեղ իրականացվող գործունեությունը: Նույն գլխի կիրառության իմաստով՝ ընտանիքի անդամներ են համարվում ծնողը, ամուսինը, զավակը, եղբայրը, քույրը:

Օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտանեկան ծեռնարկատիրության սուբյեկտներ են համարվում նույն հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված պայմանները բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ

ձեռնարկատերերը (բացառությամբ նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքերի), եթե հարկ վճարողը նույն մասում սահմանված դեպքերում և ժամկետներում հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր: Նույն մասի կիրառության իմաստով՝ ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթերի ցանկը սահմանում է հարկային մարմինը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 15.08.2017թ. N 277-Ն հրամանի 2-րդ հավելվածով հաստատված է ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող փաստաթղթերի ցանկը, որին համապատասխան՝ եղբոր կամ քրոջ դեպքում ներկայացվում են ծննդյան վկայականների և անձնագրերի (նույնականացման քարտերի) պատճենները: Ծննդյան վկայականներում ծնող(ներ)ի անունը և/կամ ազգանունը չհամընկնելու դեպքում ներկայացվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից համապատասխան տեղեկանք, որով հիմնավորվում է վերոնշյալ ազգակցական կապը:

Հաշվի առնելով վերոնշյալ կարգավորումները՝ հայտնում ենք, որ ՀՀ հարկային օրենսգրքի 266-րդ հոդվածում որպես ընտանիքի անդամ թվարկված՝ քույր կամ եղբայր ընդհանրական հասկացությունը ներառում է ինչպես հարազատ, այնպես էլ համահայր կամ համամայր քույրերին և եղբայրներին: Միաժամանակ, ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված համահայր եղբոր դեպքում՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից վերոնշյալ ազգակցական կապը հիմնավորող համապատասխան տեղեկանքի ներկայացման անհրաժեշտություն կառաջանա միայն ծննդյան վկայականներում հոր անունը և/կամ ազգանունը չհամընկնելու դեպքում:

Հարգանքով՝



Վ. ՄԻՐՈՒՄՅԱՆ